



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9894

19 2025թ.

ք. Էջմիածին

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26.09.2023թ. ՏՐՎԱԾ ԹԻՎ CPP0-0000-8682
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի, 37-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի Հ. Ավետիսյան 1-ին փակուղու թիվ 4 տան բնակիչ Արթուր Ազատի Սողոմոնյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 26.09.2023թ. տրված թիվ CPP0-0000-8682 շինարարության թույլտվությունը ճանաչել ուժը կորցրած:

2. Ապահովել սույն որոշման վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը կառուցապատողին և ՀՀ Կադաստրի կոմիտեին՝ կառուցվող շինության նկատմամբ կառուցապատողի գրանցված իրավունքների դադարեցում գրանցելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Ազատի Սողոմոնյանի իրազեկելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա. ՄԵՆԱԿՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

19 հունվարի 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9784

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սասունցի Դավթի թաղամասի բնակիչ Միխակ Վանիկի Ռաֆայելյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի 04-002-1002-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 25.10.2023թ. տրված՝ թիվ Ամ-1827 արխիվային քաղվածք, «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 29.01.2025թ. հաստատված 469 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011MZKMHV/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Սասունցի Դավթի թաղամասի 1-ին փողոց, թիվ 4 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ս. Աղաբաբյան





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐԶԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9764

19 հունիսի 2025թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Դեմիրճյան փողոցի թիվ 1 տան բնակիչ՝ Մանվել Լյովայի Ավագյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 24072025-04-0060 տրված՝ 24.07.2025թ., «Կարեն Մաչանյան» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 10.09.2025թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04011ZBWFKBZ, 04011EZRDVZE, 04011MEYLGJ7, 04011BMFRSTV, 040115WTU9PH, 040118LUTVK7, 0401149TKUME, 04011QAZ2ZB7, 04011VSJME8S/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի թիվ 42 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, թիվ 42 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, թիվ 42/1 հողամաս,

Առանձնացվող հատված 3-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, թիվ 42/2 հողամաս,

Առանձնացվող հատված 4-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, թիվ 42/3 հողամաս,

Առանձնացվող հատված 5-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, թիվ 42/4 հողամաս,

Առանձնացվող հատված 6-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, թիվ 42/5 հողամաս,

Առանձնացվող հատված 7-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, թիվ 42/6 հողամաս,

Առանձնացվող հատված 8-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, թիվ 42/7 հողամաս,

- Առանձնացվող հատված 9-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք,
ք. Էջմիածին, թիվ 42/8 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
 3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ս. Սեփակյան



Ա. ՍԵՓԱԿՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9774

22.12.2025թ.

ք.Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՎԱԴԱ ՇԱՎԱՐՇԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ, ԱՆԱՀԻՏ ՌԱՖԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ, ԳԱՐԻԿ ՍԵՎԱԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԵՎ ԳԱՅԱՆԵ ՍԵՎԱԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենցի փողոցի 1-ին նրբանցք թիվ 5/4 տան բնակիչ Սևադա Շավարշի Առաքելյանի դիմումը՝ պարզվեց, որ համաձայն 05.12.1996թ. սեփականության վկայագրի և «Ավագ Ավագյան Գագիկի» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 05.06.2025թ. կազմված հատակագիծ/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենցի փողոցում գտնվող 0.0168 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա Սևադա Շավարշի Առաքելյանի, Անահիտ Ռաֆիկի Առաքելյանի, Գարիկ Սևադայի Առաքելյանի և Գայանե Սևադայի Առաքելյանի կողմից, որպես սեփականություն տիրապետվող բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված հողատնակցման և քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենցի փողոցում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, օժանդակ շինությունները և 0.0168 հա մակերեսով հողամասը համարել Սևադայի Շավարշի Առաքելյանի /ծնված՝ 09.06.1948թ./, Անահիտ Ռաֆիկի Առաքելյանի /ծնված՝ 11.10.1952թ./, Գարիկ Սևադայի

Առաքելյանի /ծնված՝ 01.03.1971թ./, Գայանե Սևադայի Առաքելյանի /ծնված՝ 28.06.1972թ./ սեփականությունը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ս.Ս. Գեղամյան

Ա. ՄԵԽԱԿՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9784

23.12.2025թ.

ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենցի փողոցի թիվ 1-ին նրբանցք թիվ 5/4 տան բնակիչ Սևադա Շավարշի Առաքելյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենցի փողոցում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ 05.12.1996թ. տրված սեփականության վկայագիր, «Ավագ Ավագյան Գագիկի» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 05.06.2025թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011ETLXJX/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ե. Չարենցի փողոց, 1-ին նրբանցք, թիվ 5/5 բնակելի տուն:
- Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ս. Ս. Ս.

Ա. ՄԵԽԱԿՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 9790

22 սեպտեմբեր 2025թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 <<ՀԱՍՄԻԿ>>, ԹԻՎ 2 <<ՇՈՒՇԱՆ>>, ԹԻՎ 3 <<ԾԻԾԵՌՆԱԿ>>, ԹԻՎ 4 <<ՁՆԾԱՂԻԿ>>, ԹԻՎ 5 <<ԳԱՐՈՒՆ>>, ԹԻՎ 7 <<ԶՎԱՐԹՆՈՑ>>, ԹԻՎ 8 <<ՈՍՏԱՆ>>, ԹԻՎ 9 <<ԱԻԴԱ>>, ԹԻՎ 10 <<ՈՍԿԵՀԱՏ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐ, <<ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ԵՂԻՇԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԵՎ ԽՆԱՄՔԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վաղարշապատ համայնքի ավագանու 25.12.2024թ. «ՀՀ Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության մանկապարտեզ ՀՈԱԿ-ներում երեխաների խնամքի համար գանձվող 2025 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու, արտոնություններ կիրառելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն ու տեղեկությունները սահմանելու մասին» թիվ 114-Ն և 09.09.2025թ. թիվ 93-Ն, 25.12.2024թ. «ՀՀ Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության երաժշտական և գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ-ներում 2025 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու, արտոնություններ կիրառելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն ու տեղեկությունները սահմանելու մասին» թիվ 115-Ն որոշումներով, հիմք ընդունելով կրթության և մշակույթի բաժնի պետի 22.09.2025թ. զեկուցագիրը, ինչպես նաև հաշվի առնելով Վաղարշապատի համայնքապետարանի սոցիալական աշխատողների ուսումնասիրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Հաստատել Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայությամբ գործող մանկապարտեզներ, երաժշտական դպրոցներ և գեղարվեստի դպրոց հաճախող երեխաների ուսման վարձի և խնամքի համար գանձվող վարձավճարների գծով արտոնություններից օգտվող թվով 135 /հարյուր երեսունհինգ/ երեխաների ցանկը՝ համաձայն սույն որոշման անբաժանելի մաս հանդիսացող հավելվածի:
- Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Ա. ՄԵԽԱԿՅԱՆ



**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 980-Ա

«24» սեպտեմբեր 2025թ.

ք. Էջմիածին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈՂՉՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻՆ
(ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐ) ԱՆՎՃԱՐ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԴԱՀԼԻՃՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 26.08.2021 թվականի թիվ 208-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի օգոստոսի 12-ի N ՄՈ/789-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ


1. 2025 թվականի նոյեմբերի 16-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Վաղարշապատ համայնքում ավագանիների համամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ քարոզչության կողմերին (կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ) հանդիպումների և դրա հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով անվճար հիմունքներով, օրենքով սահմանված կարգով և ժամկետում տրամադրել, սույն որոշմանը կից ցանկով սահմանված դահլիճները:

2. Սույն որոշումն ուղարկել ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով և ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա. ՄԵՆԱԿՅԱՆ



Հավելված
Հաստատված է
Վաղարշապատ համայնքի ղեկավարի
պաշտոնակատարի
« 24 » սեպտեմբերի 2025 թվականի
թիվ 988-Ա որոշմամբ

ՑԱՆԿ

2025 թվականի նոյեմբերի 16-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Վաղարշապատ համայնքում ավագանիների համամասնական տրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահիճների և այլ շինությունների

ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք

Ընկերության անվանումը	Դահլիճի, շինության անվանումը	Գտնվելու վայրը (հասցեն)	Նստատեղերի թիվը	Տրամադրելու օրերը և ժամերը	Դահլիճը, շինությունը տնօրինողը	Այլ նշումներ
Բ.Էջմիածին	Վաղարշապատի համայնքապետարանի Կոմիտասի անվան մշակույթի պալատ ՀՈԱԿ-ի դահլիճ	Բ.Էջմիածին, Սուրբ Մեսրոպ Մաշտոց փողոց, 75	475	Հոկտեմբեր ամիս բացառությամբ երկուշաբթի օրերից և հոկտեմբերի 22-ից-25-ը ժամը 10:00-ից մինչև 20:00 Նոյեմբեր ամիս յուրաքանչյուր օր բացառությամբ երկուշաբթի օրերից ժամը 10:00-ից մինչև 20:00	Վաղարշապատի համայնքապետարան	
Գ.Ոսկեհատ	Վաղարշապատի համայնքապետարանի Ոսկեհատ բնակավայրի մշակույթի տան դահլիճ	Գ. Ոսկեհատ, Մաշտոցի փողոց, 43	310	Յուրաքանչյուր օր 10:00-ից մինչև 20:00	Վաղարշապատի համայնքապետարան	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա. ՄԵԽԱԿՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9814

24 սեպտեմբերի 2025 թ.

ք. Էջմիածին

**ՎԱՂԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2/3
ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՓԵՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ՀԱՄԱԴԱՏԱՍԽԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԱՆՍԱՐԴԱՅԻՆ ՀԱՐԿՈՒՄ
ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարը, քննության առնելով թիվ 10/25 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թորամանյան փողոցի թիվ 2/3 հասցեում՝ Արփենիկ Հովհաննեսի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքում առանց համապատասխան թույլտվության և քաղաքաշինական փաստաթղթերի շինարարական աշխատանքներ՝ մանսարդային հարկում առանձին մուտքեր և միմյանցից պեմզաբետոնե շարվածքի պատերով տարանջատված առանձնացված բնակելի տարածքներ կառուցելու շինարարական աշխատանքներ իրականացնելու համար վարչական տույժ նշանակելու վերաբերյալ, **պարզեց, որ**

Արփենիկ Հովհաննեսի Պետրոսյանը (հասցե՝ ք. Երևան, Աջափնյակ, Հալաբյան փող., թիվ 17 շենք, թիվ 22 բն. և իրավախախտման հասցե՝ Վաղարշապատ, ք. Էջմիածին, Թորամանյան փող., թիվ 2/3 տուն, անձնագիր՝ AS0384013, տրված 02.10.2018թ., 012-ի կողմից) իրեն սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 07.11.2023թ.-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 07112023-04-0047) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թորամանյան փողոցի թիվ 2/3 հասցեում, առանց համապատասխան թույլտվության իրականացրել է շինարարական աշխատանքներ՝ մանսարդային հարկում առանձին մուտքեր և միմյանցից պեմզաբետոնե շարվածքի պատերով տարանջատված առանձնացված բնակելի տարածքների կառուցման շինարարական աշխատանքներ՝ ինչը ի հայտ է բերել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածով սահմանված իրավախախտման հատկանիշներ, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 28.08.2025 թվականին կազմված թիվ 7 արձանագրության, տեղազնության ակտի և լուսանկարների հիման վրա 2025 թվականի օգոստոսի 28-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ և 31-րդ հոդվածների հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, իրավիճակը և անցկացրել է լուսն պատշաճ ծանուցված Արփենիկ Հովհաննեսի Պետրոսյանի մասնակցությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

1. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 28.08.2025 թվականին կազմված թիվ 7 արձանագրությունը և տեղազնության ակտը:
2. 25.08.2025 թվականին կատարված տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:

3. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 07112023-04-0047 և շինության հատակագիծը:

4. Հանձնաժողովի 17.09.2025թ.-ի թիվ 10/25 վարչական գործով լուծման անցկացնելու վերաբերյալ թիվ 1 արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Արփենիկ Հովհաննեսի Պետրոսյանը Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի Թորամանյան փողոցի թիվ 2/3 հասցեում, իրեն սեփականության իրավունքով պատկանող տարածքում առանց համապատասխան թույլտվության իրականացրել է շինարարական աշխատանքներ՝ մանսարդային հարկում առանձին մուտքեր և միմյանցից պեմզաբետոնե շարվածքի պատերով տարանջատված առանձնացված բնակելի տարածքների կառուցման շինարարական աշխատանքներ:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2025 թվականի օգոստոսի 28-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի սեպտեմբերի 17-ին հրավիրվել է լուծման, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Արփենիկ Հովհաննեսի Պետրոսյանը:

Ներկայանալով վարչական վարույթի նիստին Արփենիկ Հովհաննեսի Պետրոսյանը հայտարարեց, մեջբերում 17.09.2025թ.-ի թիվ 1 արձանագրությունից. «Ուզում եմ հայտնել, համաձայն չեմ համայնքի դիրքորոշման հետ: Կարծում եմ, որ ներքին աշխատանքների համար և բարեկարգման /հարդարման/ համար չեն պահանջվում թույլտվություններ: Նաև համաձայն չեմ, որ իմ սեփականություն հանդիսացող մանսարդային հարկում առկա են բնակարաններ, քանի որ բնակարան համարվելու համար հարկավոր են հիմքեր, որոնք առկա չեն:

Իմ կողմից չեն խախտվել ոչ մի սեյսմիկ նորմեր, նաև համարում եմ, որ ըստ ՀՀ օրենքի ևս իրավասու եմ կարարելու ներքին հարդարանքի աշխատանքներ և ներքին աշխատանքների և հարդարման համար հարկավոր չէ շին.թույլտվություն»:

Արփենիկ Հովհաննեսի Պետրոսյանի հայտարարության վրա վերջինիս բացատրվեց, որ ՀՀ Կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշման 4-րդ հավելվածի թիվ 1 ցանկով սահմանվում են ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտներ, որոնք են շինարարության թույլտվություն չպահանջող ընթացիկ նորոգման, միջին նորոգման, ընթացիկ պահպանման, ներքին հարդարման, բարեկարգման և այլ շինարարական աշխատանքներ:

Վերը նշված ցանկում չներառված աշխատանքները պահանջում են շինարարական թույլտվություն, իսկ Արփենիկ Հովհաննեսի Պետրոսյանի կողմից իրականացված աշխատանքները ներառված չեն այդ ցանկում, այսինքն դրանք չեն կարող դիտարկվել, որպես ներքին հարդարման աշխատանքներ:

Նույն որոշման 4-րդ հավելվածի 2-րդ ցանկում սահմանված են միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտները, որոնց համար անհրաժեշտ է շինարարության թույլտվություն, մասնավորապես որոշման 4-րդ հավելվածի 2-րդ ցանկի 3-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետով սահմանվում է, որ միջին ռիսկայնության (II կատեգորիայի) օբյեկտներն են՝ 300 քառ. մետր ընդհանուր մակերեսը չգերազանցող՝ մինչև երկու վերգետնյա և մեկ ստորգետնյա հարկ ունեցող՝ ոչ ձեռնարկատիրական նպատակով (բացառությամբ պետական, համայնքային կամ բարեգործական ծրագրերի շրջանակներում իրականացվող) կառուցվող անհատական բնակելի տները (առանձնատները, մենատները) և դրանց օժանդակ նշանակության կառույցները:

Այսպիսով, Արփենիկ Հովհաննեսի Պետրոսյանի կողմից կառուցված առանձնացված բնակելի տարածքները, որոնք ունեն առանձին մուտքեր և միմյանցից տարանջատվում են պեմզաբետոնե շարվածքի պատերով, նույնպես պահանջում են շինարարության թույլտվություն, քանի որ ներառված են միջին ռիսկայնության օբյեկտների ցանկում:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ Արփենիկ Հովհաննեսի Պետրոսյանի կողմից իրականացված աշխատանքները՝ մանսարդային հարկում առանձին մուտքեր և միմյանցից պեմզաբետոնե շարվածքի

պատերով տարանջատված առանձնացված բնակելի տարածքների կառուցման շինարարական աշխատանքները, դասվում են այնպիսի օբյեկտների դասին, որոնց համար անհրաժեշտ են համապատասխան մարմնից շինարարական թույլտվության ստացում:

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում են ոչ միայն հիմնական շինություն կառուցելու համար իրավախախտում, այլ տարատեսակ աշխատանքների համար, որոնց համար անհրաժեշտ է համապատասխան մարմնի շինարարության թույլտվություն կամ տեղադրման թույլտվություն:

Ուստի ակնհայտ է, որ Արփենիկ Հովհաննեսի Պետրոսյանի կողմից կատարված իրավախախտումը համապատասխանում է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքին:

Այսպիսով, գտնում եմ, որ ապացուցված կարելի է համարել այն փաստը, որ Արփենիկ Հովհաննեսի Պետրոսյանի կողմից կատարվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավախախտումները և վերջինս սույն դեպքում հանդիսանում է իրավախախտման սուբյեկտ:

Վարչական ակտ ընդունելու հիմքերը և հիմնավորումները.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Նույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնական շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրհիսնապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն՝ ինքնական կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Ինքնական կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնական կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնական կառույցի օգտագործման ու ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը:

Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնական կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները:

Ուրիշի հողամասում գտնվող ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման (ապամոնտաժման), իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

Ինքնակամ կառույցների առկայությամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման առանձնահատկությունները կարգավորվում են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով:

Համաձայն ՀՀ Կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշման 4-րդ հավելվածի թիվ 1 ցանկի՝ ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտներն են՝ շինարարության թույլտվություն չպահանջող ընթացիկ նորոգման, միջին նորոգման, ընթացիկ պահպանման, ներքին հարդարման, բարեկարգման և այլ շինարարական աշխատանքները:

Նույն ցանկի 6-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանվում են շինարարության թույլտվություն չպահանջող շենքերում ընթացիկ նորոգման և ներքին հարդարման աշխատանքները՝

1) հիմքեր՝

ա. նկուղային հարկերը շրջափակող արտաքին պարիսպների առանձին քարերի (աղյուսների) փոխում, փոխարինում,

բ. շենքերի նկուղների ներսից՝ հիմնապատերի առանձին թուլացած քարերի (աղյուսների) ամրացում,

գ. հավաքովի և միաձույլ բետոնե հիմնապատերի անհարթությունների և խոռոչների հարդարում,

դ. երեսապատում և հիմնապատերի նորոգում՝ նկուղային հարկերի ներսի կողմից հարդարում, սվաղում (քարերի վերաշարում՝ ընդհանուր մակերեսի 2 տոկոսից ոչ ավելի)՝ բացառությամբ «ե» պարբերությամբ նախատեսված դեպքերի,

ե. (*) նկուղային և որմնախարսխային (կիսանկուղային) հարկերի, ինչպես նաև ստորգետնյա ավտոկայանատեղիների, քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների համար նախատեսված սենքերի (ապաստարանների և (կամ) թաքստոցների) ներսի կողմից հիմնապատերի, միջնորմների նորոգում՝ տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացության առկայությամբ.

2) պատեր և սյուներ՝

ա. պոկված կամ թուլացած առանձին քարերի (աղյուսների) ամրացում և նորերի տեղադրում շաղախի միջոցով,

բ. քարե (աղյուսե) պատերի նեղ ճեղքերի շաղախալցում,

գ. երկաթբետոնե պատերի և սյուների ամրանների պաշտպանիչ շերտերի վերականգնում,

դ. խոշորաբլուկային և խոշորապանելային պատերի ուղղահայաց և հորիզոնական ծայրակցատեղերի մաքրում և շաղախապատում՝ օդահոսքերից ու խոնավությունից ներքին տարածքներն ու մետաղական ամրացումները մեկուսացնելու նպատակով,

ե. քարե ցոկոլների նորոգում,

զ. քարե (աղյուսե) և բետոնե սյուների անկյունների և պաշտպանիչ անկյունների տեղադրում,

է. կլոր կամ քառանիստ գերաններից ու տախտակներից կառուցված պատերի խծովվածքների փոխում, ճեղքերի և արանքների փակում՝ կանեփաթելի խրճերով,

ը. փայտյա կոնստրուկցիաների մետաղական ձգանների փոխում կամ նորերի տեղադրում,

թ. պարիսպների առանձին հատվածների վերականգնում և վերանորոգում.

3) միջնորմներ և ներքին պատեր՝

ա. ներքին պատերի և միջնորմների ամրացում, սվաղում, երեսապատում (կերամիկական սալիկներ, պաստառներ և այլն) և ներկում (այդ թվում՝ դրանց նորոգում, փոխում, փոխարինում),

բ. բոլոր տեսակի միջնորմների կոնստրուկցիաների նորոգում, փոխում, փոխարինում,

գ. միջնորմների վերնամասերում և դրանց պատերի հետ միացման տեղերում նստվածքից առաջացած ճեղքերի փակում,

դ. միջնորմների ապակեպատված հատվածներում ապակիների փոխարինում:

Նույն որոշման 4-րդ հավելվածի 2-րդ ցանկի համաձայն սահմանված են միջին դիսկալիբրայան աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտները, որոնց համար անհրաժեշտ է շինարարության թույլտվություն, մասնավորապես որոշման 4-րդ հավելվածի 2-րդ ցանկի 3-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետով սահմանվում է, որ միջին դիսկալիբրայան (II կատեգորիայի) օբյեկտներն են՝ 300 քառ. մետր ընդհանուր մակերեսը չգերազանցող՝ մինչև երկու վերգետնյա և մեկ ստորգետնյա հարկ ունեցող՝ ոչ ձեռնարկատիրական նպատակով (բացառությամբ պետական, համայնքային կամ բարեգործական ծրագրերի շրջանակներում իրականացվող) կառուցվող անհատական բնակելի տները (առանձնատները, մենատները) և դրանց օժանդակ նշանակության կառույցները:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում են, որ Արփենիկ Հովհաննեսի Պետրոսյանի կողմից իրականացված աշխատանքները չեն կարող դասվել շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների ցանկին, քանի որ ներառված չեն վերը նշված թիվ 1 և թիվ 2 ցանկերում, այսինքն դրանք չեն կարող դիտարկվել, որպես ցածր կամ միջին դիսկալիբրայան աստիճան ունեցող աշխատանքներ և պահանջում են շինարարության թույլտվություն, ուստի՝ Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի Թորամանյան փողոցի թիվ 2/3 հասցեում, առանց համապատասխան թույլտվության իրականացված շինարարական աշխատանքները՝ մանսարդային հարկում առանձին մուտքեր և միմյանցից պեմզաբետոնե շարվածքի պատերով տարանջատված առանձնացված բնակելի տարածքների կառուցման շինարարական աշխատանքները շինարարության թույլտվություն պահանջող աշխատանքներ են:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Շինարարության թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի ղեկավարը քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից համակարգվող քաղաքաշինական թույլտվությունների առցանց տրամադրման համակարգի միջոցով՝ Կառավարության սահմանած կարգով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 32-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, վարչական իրավախախտումների մասին օրենսդրության հիմունքներին, նույն օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան:

Տվյալ պարագայում Արփենիկ Հովհաննեսի Պետրոսյանի կողմից Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի Թորամանյան փողոցի թիվ 2/3 հասցեում, իրեն սեփականության իրավունքով պատկանող տարածքում առանց համապատասխան թույլտվության իրականացրել են շինարարական աշխատանքներ՝ մանսարդային հարկում առանձին մուտքեր և միմյանցից պեմզաբետոնե շարվածքի պատերով տարանջատված առանձնացված բնակելի տարածքների կառուցման շինարարական աշխատանքներ, որոնք պահանջում են շինարարության թույլտվություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ, 278-րդ, 279-րդ և 281-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 42-րդ

հողվածի առաջին մասի 8-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի ա) կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արփենիկ Հովհաննեսի Պետրոսյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի Թորամանյան փողոցի թիվ 2/3 հասցեում, իրեն սեփականության իրավունքով պատկանող տարածքում առանց համապատասխան թույլտվության շինարարական աշխատանքներ կատարելու՝ մանսարդային հարկում առանձին մուտքեր և միմյանցից պեմզաբետոնե շարվածքի պատերով տարանջատված առանձնացված բնակելի տարածքներ կառուցելու համար 700 000 /յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով:

2. Նախագգուշացնել Արփենիկ Հովհաննեսի Պետրոսյանին, որ սույն որոշմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված արարքը տուգանք նշանակելուց հետո շարունակել կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկից երեքհազարապատիկի չափով:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱԿԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Վ.Ս.

Ա. ՄԵՆԱԿՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 988-Ա

« 24 » սեպտեմբեր 2025թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐԽԻՎԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀՀ ԱՄՎՀ ՄԱԾՁԲ-25/8 ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,
«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ
հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատի համայնքապետարանի կարիքների համար արխիվային
ծառայությունների մատուցման ՀՀ ԱՄՎՀ ՄԱԾՁԲ-25/8 ծածկագրով պայմանագրով
սահմանված ծառայություններ ընդունելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն
սույն որոշման անբաժանելի մասը հանդիսացող հավելվածի:

2. Հանձնաժողովի կազմում ներգրավել կատարող՝ «Հայաստանի ազգային արխիվ»
ՊՈԱԿ-ի աշխատակից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ս. Ա. Արթուրյան

Ա. ՄԵԽԱԿՅԱՆ



Հավելված

Վաղարշապատ համայնքի ղեկավարի
34 *Վաղարշապատ* 2025թ. թիվ 9896 որոշման

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐԽԻՎԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀՀ ԱՄԿ ՀԱ ԾՁԲ-25/8 ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ**

Հանձնաժողովի նախագահ՝ Երվանդ Խաչատրյան /աշխատակազմի քարտուղարի ժ/պ/,
Անդամներ՝ Սամվել Մելքոնյան /քարտուղարության բաժնի պետ/,
Արմեն Խուդաբաշյան /Ոսկեհատ բնակավայրի վարչական ղեկավար/,
Կարմեն Մանուկյան /աշխատակազմի առաջատար մասնագետ/,
Ոստանիկ Մարտիրոսյան /քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ/,
Կարեն Սմբատյան /եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի
պետի ժ/պ/,
Կարինե Եսայան /իրավաբանական բաժնի պետ/,
Հասմիկ Մովսիսյան /քարտուղարության բաժնի առաջատար մասնագետ/,
Արմինե Օհանյան /ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի տեղակալ-գլխ.
հաշվապահ/,
Արման Բաբայան /աշխատակազմի առաջատար մասնագետ
/գորահավաքային և քաղաքաշտպանության հարցերով/,
Իննա Սարգսյան /«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի Արմավիրի
մարզային մասնաճյուղի առաջատար արխիվագետ/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Վ. Սեփակչյան

Ա. ՄԵՖԱԿՅԱՆ

